ՋԱՆՖԻԴԱՅԻ 924 ԹՈՒԱԿԻՐ ԽԱՉՔԱՐԸ (ՀՀ ԱՐՄԱՒԻՐԻ ՄԱՐԶ)

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ars.vimagraget@gmail.com

ՄՈՒՏՔ

Միջնադարեան Հայաստանի պատմութեան ուսումնասիրման համար հաւաստի սկզբնաղբիւրներ համարուող վիմական արձանագրութիւնները մեծաթիւ են ինչպէս բուն Հայաստանում, այնպէս էլ գաղթօճախներում: Վիմագրերի ընդօրինակման եւ գիտական ուսումնասիրման աշխատանքներն սկզբնաւորուել են դեռեւս նախորդ դարասկզբից՝ ակադեմիկոսներ Նիկողայոս Մառի (1865-1934) եւ Յովսէփ Օրբելու (1887-1961) նախաձեռնութեամբ, որոնց մշակած սկզբունքների հիմամբ վիմագրագէտ Սեդրակ Բարխուդարեանը (1898-1970) կեանքի կոչեց «Դիւան Հայ Վիմագրութեան» մատենաշարը: Բարխուդարեանի եւ նրա սաների կողմից մինչ օրս կազմուել եւ հայագէտների սեղանին է դրուել մատենաշարի տասը պրակ[1], սակայն, փաստ է, որ հրատարակուած նիւթը գործի միայն մէկ մասն է. դեռեւս բազմաթիւ վիմագրեր սպասում են իրենց հետազօտողներին:

ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի վիմագրութեան բաժինն այսօր եւս շարունակում է Բարխուդարեանի «դիւանակազմութեան» սկզբունքներով արձանագրութիւնների ընդօրինակման եւ հրատարակման առաքելութիւնը: Դեռեւս անտիպ են Արագածոտնի, Կոտայքի, Արմաւիրի, Արարատի մարզերի վիմագրերն ամբողջացնող հատորները: Պէտք է համալրուեն եւ լրացուցիչ պրակներով հրատարակուեն նաեւ Սիւնիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տաւուշի մարզերի, ինչպէս նաեւ Արցախի մի շարք բնակավայրերի ցարդ չուսումնասիրուած հարիւրաւոր արձանագրութիւններ:

Վերջերս մեր հեղինակութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրատարակուեց Վաղարշապատի վանքերի վիմագրերն ամբողջացնող ուսումնասիրութիւնը, որտեղ քննութեան է առնուած աւելի քան 700 արձանագրութիւն (500ից աւելին առաջին անգամ դրուեց գիտական շրջանառութեան մէջ)[2]: Վաղարշապատի վիմագրական հարուստ նիւթը հող նախապատրաստեց նաեւ Արմաւիրի մարզի վիմագրերն ընդգրկող *Դիւանի* կազմութեան համար, ինչին էլ միտուած էր 2016 մեր առաջին գիտարշաւը՝ մարզի գիւղական համայնքներում:

Մեր այդ արշաւի ժամանակ էլ յայտնաբերեցինք Ժ. դարի արձանագրութեամբ մի խաչքար, որ այստեղ դնում ենք գիտական շրջանառութեան:

ԽԱՉՔԱՐԸ

Արմաւիրը (նախկին՝ Հոկտեմբերեան) եւ նրա շրջակայ գիւղերը գրեթէ զուրկ են միջնադարեան յուշարձաններից: Շրջանի եկեղեցիներն ու սրբավայրերը հիմնականում թուագրւում են ԺԹ. դարով կամ նախորդ դարասկզբով, հետեւաբար՝ վաղ թուագրմամբ արձանագրութիւն, գոնէ այս տարածաշրջանից, չէինք ակնկալում: Սակայն, Ջանֆիդա գիւղից 2 կմ արեւելք գտնուող «Խաչքարի Դաշտ» կոչուող հանդամասի՝ 1970ականներին կառուցուած մատռանման շինութեան ներսում յաջողուեց վաւերացնել 924 թուակիր մի վայելուչ ու արձանագիր խաչքար:



Խաչքարի քանդակազարդ նիստը եւ գրչանկարը

ՅՀԳ. (924) ԹՎԱ/
ԿԱՆԻՆ ԿԱԼՆԻԿ/
ՆԵՑԻ ՋԽԱՉՍ:

ԵՍ՝ ԳՈՐԳ ՐՔԱ/
ՀԱՆԱ, Ի ԲԱՐԻԵ/
ԽԱԼՍՅՈՒԹԻՒՆ/
ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ:

Խաչքարի եւ նրա գտնուելու վայրի մասին առաջին յիշատակութեան հանդիպել ենք ՀՀ Պատմութեան եւ Մշակոյթի Անշարժ Յուշարձանների պետական ցուցակում, որտեղ կոթողը թուագրուած է Թ.-ԺԱ. դդ.[3], իսկ վերջերս հրատարակուած *Հայաստանի Հանրապետութիւն* ստուարածաւալ պատմական հանրագիտարանի Ջանֆիդա գիւղի նկարագրութեան համապատասխան բաժնում գտանք նաեւ նոյն ժամանակաշրջանով թուագրուած այս խաչքարի լուսանկարը[4]: Մեր պրպտումները պարզեցին, որ խաչքարին ծանօթ է եղել նաեւ վիմագրագէտ Աբրահամ Շահինեանը, որն իր միջնադարեան կոթողային յուշարձաններին նուիրուած

պատկերագրքում ներկայացնում է դեռեւս բացօթեայ կանգնած խաչքարի լուսանկարն ու արձանագրութեան վերծանութիւնը՝ որոշ տարընթերցումներով[5]: Շահինեանը եւս հաստատում է, որ «*Արարատեան դաշտում, առհասարակ, քիչ են պահպանուել հայկական հնագոյն կոթողներ ու խաչքարեր*»[6]: Քննութեան ենթակայ խաչքարի գիւտը կարեւորւում է յատկապէս այս տեսանկիւնից, յետոյ միայն՝ քանդակային-յօրինուածքային ու հնագրական յատկանիշներով:

Խաչքարն այժմ գտնւում է մի նորակառոյց փոքրաչափ շինութեան ներսում՝ պատին կից: Արեւելեան կողմում կառուցուած է եռակամար յօրինուածքով փոքր խորան, ուր հաւատացեալներ եւ ուխտաւորներ սուրբ գրքեր եւ սրբապատկերներ են դրել: Տեղացիների վկայութեամբ՝ խաչքարը պատահականօրէն գտնուել է շրջակայ հանդամասից՝ հողագործական աշխատանքների ընթացքում. այն կանգնեցուել եւ 1970ականներին տեղում աղօթատուն է կառուցուել:

Առաջին խաչքարերի աստիճանական զարգացումը. խաչքարային մանրամասներ (Գառնի՝ 879, Դաշտադէմ՝ 882, Ջանֆիդա՝ 924)

Կոթողի չափերն են.- բարձրութիւնը՝ 0,97 մ, լայնութիւնը՝ 0,68 մ, հաստութիւնը՝ 0,35-0,40 մ: Բազալտէ քարի մակերեսը բոլորում է ելնդաւոր անզարդ եզրագօտին, իսկ բուն յօրինուածքը, որի կենտրոնում երկբլթակ կամ գնդիկաւոր թեւերով աւարտուող ու ակօսաւոր կրկնագծերով հիմնախաչն է, ստացուել է լայնակօս փորագրման կամ ետնախորքը լայն շերտերով հեռացնելու միջոցով: Ստորին ուղղահայեաց խաչաթեւից սկիզբ առնում եւ մինչեւ հորիզոնական թեւերն է ձգւում լայնատերեւ արմաւազարդը՝ դարձեալ ակօսաւոր եզրագծերով: Ակներեւ է, որ թուարկուած բոլոր բաղադրիչները բնորոշ են խաչքարերի առաջին՝ Թ.-Ժ. դարերի խմբին[7]:

Վիմագրութեան նմուշներ.
Ջանֆիդա՝ 924, Երերոյք՝ 951, Դաշտադէմ՝ 975

Յատկանշելի է այն, որ խաչքարի ներքնամասում որեւէ պոչուկ կամ ելուստ չի նկատւում: Այս հանգամանքը թոյլ է տալիս կարծել, որ կոթողն ի սկզբանէ կերտուել է ոչ թէ առանձին կանգնեցնելու, այլ պատին ագուցելու համար, մանաւանդ, որ քարի ուղղանկիւն մշակումը եւ միւս նիստերի անհարթութիւնը նոյնպես այդ են փաստում: Հնագէտ Համլէտ Պետրոսեանի բնորոշմամբ «*10-11րդ դարերի ուղղանկիւն խաչքարերի մի մասը սալի ներքնամասում որեւէ պոչուկ կամ ելուստ չունի, ինչը վկայում է, որ դրանք նախատեսուած էին ոչ թէ առանձին կանգնեցնելու, այլ պատի մէջ դնելու համար*»[8]: Եթէ այս մօտեցումը ճիշտ է, ապա խաչքարի տեղում կամ մօտակայքում ինչ-որ շինութիւն (մատուռ, եկեղեցի) պէտք է եղած լինէր, որի պատի մէջ էլ այն տեղադրուել է: Մեր այցելութեան ժամանակ գոնէ շրջակայ տարածքում որեւէ կառոյցի հետք չնշմարեցինք, մինչդեռ գիւղացիները հաստատում են, որ հողագործական աշխատանքների ընթացքում պարբերաբար ի յայտ են գալիս նաեւ խեցեղէն գտածոներ:

Եթէ կոթողի քանդակային յարդարանքն իրականացուել է իր ժամանակին բնորոշ շեշտուած ու խորը փորագրութեամբ, ապա նոյնը չի կարելի ասել արձանագրութեան մասին: Վերին ուղղահայեաց խաչաթեւի երկու կողմում՝ 3 եւ 4 տողից կազմուած վիմագիրը բաւական մանրատառ է եւ ոչ-խորը փորագրութեամբ (գրչանկարը՝ Ա. Յարութիւնեանի):

Նկատենք, որ Թ.-Ժ. դդ. խաչքարերին բնորոշ յատկանիշներից մէկն էլ սալաքարի արտաքին երեսի շրջանակին կամ խաչաթեւերի արանքներում զետեղուած վիմագիրն էր (Կատրանիդէ թագուհու 879 թուակիր խաչքարը Գառնիում, Սուսէի 882 թուակիր խաչքարը Դաշտադէմում, Հայր Սուփանի կանգնեցրած 937 թուակիր խաչքարը Գնդեվանքում եւն.), որոնք ոչ միայն աղբիւրագիտական ուշագրաւ տեղեկագրեր են, այլեւ հայ հնագրութեան իւրօրինակ նմուշներ[9]:

Արձանագրութեան առաջին կէսը գրեթէ ամբողջովին պատուած էր մոմի շերտով, ուստի զգուշօրէն այն հեռացնելուց յետոյ միայն հնարաւոր եղաւ կարդալ բնագիրը: Ինչ վերաբերում է երկրորդ կէսին, ապա քարի վերնամասը աջակողմում կոտրուած է, որի հետեւանքով վնասուել են նաեւ վիմագրի յատկապէս առաջին եւ երկրորդ տողերի վերջաւորութիւնները. բարեբախտաբար, դրանք վերականգնելի էին եւ վերծանութեան մէջ որեւէ տարակոյս չեն յարուցում: Թերեւս, քարի վնասուածութիւնն է պատճառը, որ Շահինեանն իր վերծանութեան մէջ որոշ անհարկի բառեր է աւելացրել: Ակներեւ է, որ *բարեխաւսութիւն* բառը երկրորդ տողում, երկրորդ վանկից տողադարձուել է, ըստ այդմ՝ երրորդ տողում ընթեռնելի է բառիս *խաւսութիւն* հատուածը, որը Շահինեանը կարդում է ՔԱՀՈՒԹԻՒՆ, իսկ երկրորդ տողի վերջին *բարեն*՝ ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ: *Հաւատացելոց* բառից յետոյ Շահինեանն առանց որեւէ բացատրութեան լրացնում է՝ Ի ՔՐԻՍՏՈՍ: Այսքանով հանդերձ, վիմագրի աջակողմեան մասը Շահինեանի վերծանութեամբ այսպիսին է. «ԵՍ՝ ԳՈՐԳ ՔԱ/ՀԱՆԱ, Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ / ՔԱՀՈՒԹԻՒՆ / ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ / Ի ՔՐԻՍՏՈՍ»[10]:

Վիմագրի հնագրական յատկանիշները լիովին հարազատ են դարաշրջանին. Ա գրերի աջակողմեան ստեղնը ներքուստ ունի աղեղնաձեւ պտտուող ելուստ: Հնագէտ-վիմագրագէտ Կարօ Ղաֆադարեանի բնորոշմամբ՝ բոլորաձեւ երկաթագիր տառատեսակներից. «*Ա գրի հնագոյն նմուշների մէջ աջակողմեան ստեղնից մի բարակ գիծ իջնում է կամարի վրայ եւ նոյն գառաստեան ստորին մասից դուրս գալով՝ առաջացնում է նրա ելուստը*»[11]: Ինքնատիպ ու նրբաքանդակ են նաեւ միւս գրերը, որոնցից կարելի է առանձնացնել Զ, Ց, Կ, Թ տառաձեւերը: Թուականի տառերը փորագրիչն առանձնացրել է՝ վերին եւ ստորին մասերում տեղադրելով հորիզոնական գծեր: Չնայած նրան, որ վիմագրում կցագրեր չկան, այդուհանդերձ *կանկնեցի* բառում մեր վերականգնած առաջին **ն**ն կարելի է դիտել նաեւ կցուած յաջորդող **կ**ի առաջին ստեղնին:

Վիմագրի բովանդակութեան խնդրով, պէտք է արձանագրել, որ այս հարցում եւս խաչքարն աղերսւում է իր ժամանակակիցների հետ: Պետրոսեանի հաւաստմամբ՝ «*...առաջին խաչքարեր կանգնեցնողների շարքում են պեպութեան ու եկեղեցու մի շարք աչքի ընկնող դէմքեր՝ թագուհին, Արեւելից Կողմանց իշխանը, եպիսկոպոսներ, քահանաներ եւ այլք, եւ որ դրանց կերտման առաջնային նպատակներից մէկն էլ, ըստ խաչքարային արձանագրութիւնների, ժողովրդի մասին հոգածութիւնն էր*»[12]: Այս դիտարկումը լիովին համահունչ է այս խաչքարի արձանագրութեանը, որտեղ վկայուած է կոթողի կանգնեցումը Գորգ անունով

քահանայի կողմից՝ ի բարեխօսութիւն հաւատացեալների, այսինքն՝ հաւատաւոր ժողովրդի: Համանման է Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ (Մազրա) գիւղի հին գերեզմանոցի 881 թուակիր խաչքարի վիմագիրը, ըստ որի՝ յուշարձանը կանգնեցրել է Սիւնեաց եւ Աղուանից իշխան Գրիգոր Ատրներսեհեանը՝ իբրեւ. «...*աւգնական հաւատացելոց*...»[13]: *Աւգնականն* այս ենթահողում զուգադիր է *բարեխաւսութիւն* բառին: Խաչքարային այսօրինակ յիշատակագրութիւնները նաեւ խաչքարի ընկալման իւրօրինակ դրսեւորումներից են, երբ կոթողն իբրեւ միջնորդ է Աստուծոյ եւ հաւատացեալի միջեւ: Վիմագրում վկայուած *Գորգ* անձնանունն այս եւ յետագայ դարերում այնքան տարածուած էր, որ դժուար է այս անձնաւորութեանը միւսներից զատորոշել եւ որեւէ լրացուցիչ տեղեկութիւն հաղորդել նրա մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ընդհանրացնելով այս բացառիկ յուշարձանի մասին ունեցած մեր ասելիքը՝ կարող ենք վստահաբար արձանագրել, որ գործ ունենք առաջին խաչքարերի սակաւադէպ արձանագիր մի նմուշի հետ, այն էլ մի այնպիսի միջավայրում, որտեղ նմանօրինակներ չեն փաստագրւում: Ջանֆիդայի խաչքարը Ժ. դարասկզբին յատուկ կոթողային մշակոյթի տիպական դրսեւորումներից է, որտեղ յաջողութեամբ մէկտեղուած են յուշարձանի ծաւալային-յօրինուածքային, գործառոյթային եւ հնագրական առանձնայատկութիւնները:

1970ականներին կառուցուած մատռանման շինութիւնը եւ նրա ներքին տեսքը

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ I, Անի քաղաք*, կազմ.՝ Յ. Ա. Օրբելի, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1966: *Պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի Շրջաններ*, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1960: *Պրակ III, Վայոց Ձոր. Եղեգնաձորի եւ Ազիզբեկովի Շրջաններ*, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1967: *Պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու եւ*

Վարդենիսի Շրջաններ, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973: *Պրակ V, Արցախ*, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982: *Պրակ VI, Իջեւանի Շրջան*, կազմ.՝ Ս. Ա. Աւագեան, Հռիփսիմէ Ջանփոլադեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1977: *Պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա*, աշխ.՝ Գրիգոր Գրիգորեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1996: *Պրակ VIII, Ռուսաստանի Դաշնութիւն*, աշխ.՝ Գրիգոր Գրիգորեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1999: *Պրակ IX, Լոռու Մարզ*, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Կ. Գ. Ղաֆադարեան, Ս. Տ. Սաղումեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2012: *Պրակ X, Շիրակի Մարզ*, կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարեան, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2017:

[2] Ա. Յարութիւնեան, *Վաղարշապատ. Վանքերը եւ Վիմական Արձանագրութիւնները*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատ., 2016:

[3] ՀՀ Պատմութեան եւ Մշակոյթի Անշարժ Յուշարձանների Պետական Ցուցակ. Արմաւիրի Մարզ, Հփ 3.83/1:

[4] Ս. Յակոբեան, Ա. Յակոբեան, *«Հայաստանի Հանրապետութիւն» Պատմական Հանրագիտարան*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2015, էջ 260:

[5] [Ա. Շահինեան], *Հայաստանի Միջնադարեան Կոթողային Յուշարձանները. IX-XIII Դարերի Խաչքարերը*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 16, նկ. 63:

[6] Նոյն, էջ 15-16:

[7] Համլէտ Լ. Պետրոսեան, *Խաչքար. Ծագումը, Գործառոյթը, Պատկերագրութիւնը, Իմաստաբանութիւնը*, Երեւան, «Փրինթինֆո», 2008, էջ 93, 97:

[8] Նոյն, էջ 102:

[9] Շահինեան, էջ 25:

[10] Նոյն, էջ 16, արձ. 7:

[11] Կարօ Ղաֆադարեան, «Հայկական Գրի Սկզբնական Տեսակները», *Էջեր Հայոց Միջնադարեան Մշակոյթի եւ Պատմութեան, Գիտական Ժառանգութիւն, Հրր. 5*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2007, էջ 146. նաեւ՝ Ա. Աբրահամեան, *Հայոց Գիր եւ Գրչութիւն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1973, էջ 65:

[12] Պետրոսեան, էջ 95:

[13] *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ IV*, էջ 334, արձ. 1358:

A STONE CROSS DATED 924: THE *KHACHKAR* OF JANFIDA VILLAGE (PROVINCE OF ARMAVIR, REPUBLIC OF ARMENIA)

(Summary)

ARSEN HARUTYUNYAN
ars.vimagraget@gmail.com

Generally speaking, very few old Armenian epigraphic inscriptions exist (or are known) in the province of Armavir, Republic of Armenia. The monuments which are found in this province mostly come from the late 18th early 19th century. Nonetheless, 2 km. east of Janfida village a 0.97x0.68x0.35-0.40 meter-sized *khachkar* with an inscribed date of 924 was discovered sheltered in a newly constructed religious building. The fact that the oldest inscribed *khachkar* bears the date 879 and that very few are those which bear dates of the early 10th century makes this *khachkar* one of the rare examples of earliest inscribed *khachkras*. The *khachkar* was accidentally revealed during agricultural work in the 1970s and was dated as a 9th-11th-century monument.

The author, in this article, decodes the inscription and its date. According to the inscription, in the year 924 a priest named Gorg erected the *khachkar* in memory of and intercession for pious people. Such a purpose for the erection is typical of the first period of medieval *khachkars*, because one of the main aims of erecting *khachkars* then was to intercede and plead for the population. Furthermore, its motifs, style and paleographic features are entirely typical of and in tune with the oldest period (9-11th centuries) of *khachkar* culture.